ՄՐՑՈՒՅԹ

Տվյալների պահոցի (storages) վերազինում ձեռք բերելու

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է Տվյալների պահոցի (storages) վերազինման բաց մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձիք:

Մրցույթի հայտ չեն կարող ներկայացնել այն կազմակերպությունները՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հետաքրքրված մասնակիցները պետք է ուղարկեն հետաքրքրության հայտ մինչև 2024 թվականի մայիսի 10-ը Երևանի տեղական ժամանակով ժամը 18:00-ը (GMT +4) tender@arca.am էլեկտրոնային փոստի միջոցով:

Հետաքրքրության հայտ ներկայացված մասնակիցների հետ համապատասխան գաղտնիության հուշագիր (NDA) կնքելուց հետո, մասնակցին կտրամադրվեն մրցույթի տեխնիկական մանրամասները:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով:

Մրցութային առաջարկը պարտադիր պետք է պարունակի՝

1. Մրցույթի առարկայի գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
2. վճարման պայմանները, մատակարարման ժամկետները,:
3. Նմանատիպ մատակարարումների և աշխատանքների իրականացման փորձը հավաստող տեղեկություններ, գործընկերների ցանկ
4. Մատակարար կազմակերպությունը պետք է ունենա արտադրողի հավաստագրման թերթիկ (MAF) :

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկները ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 2024 թվականի մայիսի 17-ի ժամը 18.00-ն: